ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«09» սեպտեմբեր 2025թ. N ՄՈ/828-Ա

ք. Արմավիր

ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ «ՇԵՆԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 37.1-ին, 37.2-րդ և 37.3-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 1653-Ա հրամանով ձևավորած մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 26-ին կայացած նիստի N 392 արձանագրությունը.

որոշում եմ՝

1. Սարգիս Հովհաննիսյանին նշանակել «Շենավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, 2025 թվականի սեպտեմբերի 9-ից նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 1 տարի փորձաշրջանով՝ համաձայն հավելվածի:
2. Փորձաշրջանի ղեկավար նշանակել «Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գայանե Սաֆարյանին:
3. Փորձաշրջանի ղեկավարին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 1653-Ա հրամանով ձևավորած մասնագիտական հանձնաժողովին ներկայացնել տնօրենի աշխատանքների գնահատման թերթիկը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**